

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության. վարչական տույժ նշանակելու մասին 26.11.2020թ. թիվ 2011928561 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<20>> 01 2021թ. 7-13 253

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վարուժան Մուրադյանի ՄԴ/160683-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Վարուժան Մուրադյանը (**ծանուցման հասցե՝** քաղաք Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, 49-րդ շենք, 49-րդ բնակարան) դիմումով խնդրել է չեղարկել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011928561 որոշումը՝ նշելով, որ տվյալ հատվածում չեն եղել կայանումն արգելող համապատասխան գծանշում կամ ճանապարհային նշան, բացի այդ, ավտոմոբիլը կայանվել է ազդման գոտու վերջ նշանից հետո:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Ճանապարհային ոստիկանության ճանապարհային երթևեկության կազմակերպման հսկողության բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Հ. Քոչար - Փափազյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում երթևեկության մասնակիցներին տեսանելի վայրում տեղադրված են 3.27՝ «Կանգառն արգելվում է» և 8.2.4 «Ազդման գոտի» ճանապարհային նշաններ, որոնք առկա են եղել նաև իրավախախտման օրվա դրությամբ, իսկ իրավախախտման վայրը գտնվում է վերը նշված ճանապարհային նշանի ազդման գոտում:

Նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «OPEL» մակնիշի 35UA039 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 09.11.2020թ. ժամը՝ 16:56-ին տեղակայված է եղել Երևան քաղաքի Հ. Քոչար - Փափազյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ «Կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ-ի թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ 3.27՝ «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի ազդման գոտում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Այսպիսով, ակնհայտ է դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տալու փաստը, ինչի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- 1.Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 26.11.2020թ. թիվ 2011928561 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
- 3.Սույն որոշման օրինակն ուղարկել Վարուժան Մուրադյանին:



Ե.Կարապետյան